ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1545

25.05.2015թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Ձեր կողմից Դիտորդական խմբի թիվ 2621/1532 գրությանը լ պատասխան տրված թիվ 2/2-1-1646 գրության մեջ նշված Ռ. Բրոյանի տեսակցությունը պաշտպանի հետ 27.01.2015թ-ի ժամը 21.15-23.40 ընկած ժամանակահատվածում ինչով է հիմնավորվում:

Հարցը ինքնանպատակ չէ, խնդիրը այն է, որ տվյալ ՁՊՎ-ի համապատասխան <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չկա փաստաբանի հետ հանդիպման մասին, որևէ գրառում, պարզապես նշված ժամանակահատվածում, անձը խցից դուրս է եկել և տեղափոխվել է քննչական սենյակ: Գրառումը կատարվել է խախտումով՝ նշված չէ թե ինչ նպատակով է տեղափոխվել:

Արդյունքում՝ խնդրում ենք Դիտորդական խմբին տեղեկացնել առկայության դեպքում ինչպես նաև տրամադրել Ձեր կողմից նշված ամիս ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկությունը փաստաբանի հետ հանդիպման վերաբերյալ:

Կանխավ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԲ № 2391
26 05 2015 թ.

ՀՀ ոստիկանության
ՄՏԲ № 3361
26 05 2015թ.

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

Հասմիկ Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 1762 «01» 06 2015թ.

Ձեր 25.05.2015թ. թիվ 2621/1545 գրության

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ Ռ.Բրոյանը ձերբակալվել է 26.01.2015թ. ժամը 23.50-ին և վերջինս օգտվելով իր իրավունքից ցանկացել է հարցաքննվել պաշտպանի մասնակցությամբ: Քննիչը ղեկավարավելով ՀՀ քր. դատ. օր-ի պահանջներով՝ 27.01.2015թ. որոշում է կայացրել կասկածյալ Ռ.Բրոյանին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար, որպես հանրային պաշտպան ներգրավել փաստաբան Հ.Գալստյանին: Նույն օրը, քննիչը նշված պաշտպանի հետ այցելել է ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի ՁՊՎ, որտեղ քննչական սենյակում վերջինիս կողմից կասկածյալին է ներկայացվել հանրային պաշտպանը, որից հետո Ռ.Բրոյանից 27.01.2015թ. ժամը 21.15-ից մինչև 23.40-ը վերցվել է ցուցմունք:

Այդ մասին ՁՊՎ-ի՝ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում պատշաճ գրառում չի կատարվել, ինչի համար հերթապահ մասի պետը և ՁՊՎ-ի վարչակազմը խիստ նախազգուշացվել են:

Հարկ է նշել, որ ոստիկանության ծառայողների գործողությունների արդյունքում ձերբակալված Ռ.Բրոյանի իրավունքները չեն խախտվել:

ՀՀ ոստիկանության շտաբ